



<p><i>Համարը</i> թիվ 44  <i>Տիպը</i> Որոշում  <i>Սկզբնաղբյուրը</i> Չի հրապարակվել  <i>Ընդունող մարմինը</i> Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդ  <i>Ստորագրող մարմինը</i> Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ  <i>Վավերացնող մարմինը</i>  <i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i></p>	<p><i>Տեսակը</i> Հիմնական  <i>Կարգավիճակը</i> Գործում է  <i>Ընդունման վայրը</i> Մոսկվա  <i>Ընդունման ամսաթիվը</i> 18.04.2018  <i>Ստորագրման ամսաթիվը</i> 18.04.2018  <i>Վավերացման ամսաթիվը</i>  <i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i></p>
-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

**☒ Կապեր այլ փաստաթղթերի հետ**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԻՊԱՅԻՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ԽՈՐՀՈՒՐԴ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 ապրիլի 2018 թվականի

թիվ 44

քաղ. Մոսկվա

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԻՊԱՅԻՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 9 հավելված) 5-րդ կետին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 42-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ համապատասխանության գնահատման տիպային սխեմաները:
2. Սահմանել, որ

ա) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի նախագծերը, որոնց մասով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի թիվ 48 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման, փոփոխությունների կատարման և չեղարկման կարգին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ներպետական համաձայնեցման ընթացակարգեր չեն սկսվել՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը, մշակվում են սույն որոշմամբ հաստատված համապատասխանության գնահատման տիպային սխեմաների հիման վրա.

բ) Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 621 որոշմամբ հաստատված «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման (հաստատման) տիպային սխեմաները կիրառելու կարգի մասին» հիմնադրույթը կիրառվում է մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրն ընդունված՝ Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատում անցկացնելիս՝ Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) նշված տեխնիկական կանոնակարգերում սահմանված դրույթներին չհակասող մասով՝ նախքան սույն որոշմամբ հաստատված համապատասխանության գնահատման տիպային

սխեմաների հիման վրա համապատասխանության գնահատման սահմանված ձևերին, սխեմաներին և ընթացակարգերին առնչվող փոփոխությունները դրանցում կատարելը:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից

ա) սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից եռամսյա ժամկետում նախապատրաստել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 79 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի մշակման և Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում փոփոխությունների կատարման ծրագրում փոփոխություններ կատարելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագիծը՝ այնպիսի կետերով այն լրացնելու մասով, որոնցով նախատեսվում է Եվրասիական տնտեսական միության (Մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերում կատարել սույն որոշմամբ հաստատված համապատասխանության գնահատման տիպային սխեմաների հիման վրա համապատասխանության գնահատման ձևերի, սխեմաների և ընթացակարգերի (այդ թվում՝ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների գործընթացն ու արդյունքներն արձանագրելու եղանակների) սահմանմանն առնչվող փոփոխություններ:

բ) մինչև 2019 թվականի հունիսի 1-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2017 թվականի հունիսի 30-ի թիվ 80 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ արտադրանքի պետական գրանցման վկայականի գործողության ժամկետը սահմանելու և սույն որոշմամբ հաստատված՝ Արտադրանքի պետական գրանցման վկայականի ձևակերպման կանոնները սույն որոշմամբ հաստատված համապատասխանության գնահատման տիպային սխեմաներին համապատասխանեցնելու մասով՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանությունը հաստատող՝ արտադրանքի պետական գրանցման վկայականի ձևակերպման մասով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

<b>Հայաստանի Հանրապետությունից՝</b>	<b>Բելառուսի Հանրապետությունից՝</b>	<b>Ղազախստանի Հանրապետությունից՝</b>	<b>Ղրղզստանի Հանրապետությունից՝</b>	<b>Ռուսաստանի Դաշնությունից՝</b>
<b>Վ. Գաբրիելյան</b>	<b>Վ. Մատյուշևսկի</b>	<b>Ա. Մամին</b>	<b>Ս. Մուկանբետով</b>	<b>Ի. Շուվալով</b>

[ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ](#)